5), միայն վերջինս ճակատին իրար կից զոյգ լուսամուտներ ունի:

Համեմատաբար ամենից լաւ է պահուած հիւսիսային պատը (Պատկ. 2), որ եւ լիովին գաղափար է տալիս եկեղեցու կամթեան մասին դրսից եւ ներսից: Պահուած է հիւսիսային դուռը իւր վիթխարի ճակատաքարով եւ դուրս ընկած կամարով. դրան երկու կողքերից մի մի լուսամուտ, ապա դէպի արեւմուտք ձգուած թեւի վերայ մուտ, մինչեւ նոյն տեղում Արուճը, բնականարար, երկուսն ունի:

Ձիշդ նոյն կազմութիւնն ունէր արտաքուստ եւ հարաւային պատը. ներսից նկատելի է հիւսիսային դրան դէմ ու դէմ եւ հարաւային դուռը. իսկ դրսից դէպի արեւելք ձգուած թեւի վերայ երկու լուսամուտ, երրորդը՝ աւելի ցած ընկած լուսամուտը՝ պիտի լինէր, որ քանդուած է ամբողջ պատի հետ: Այստեղ եւս, պատի ճակատին, կայ մի



Պատկ. 4

զոյգ լուսամուտներ, պսակներն իրար միացած. արեւելեան թեւի վերայ սրանց ուղղութեամբ միայն մի լուսամուտ է, իսկ երկրորդն էլ քիչ ցած, որ սենեակի համար էր: Այս անհամաչափութիւնը ճշդութեամբ կրկնուած է եւ Արուճի վերայ, մի տարբերութեամբ, որ այնտեղ մի մի լուսամուտ աւելի է երկու կողմից, չէնքի աւելի մեծ լինելու պատճառով: Հիւսիսային պատի ճակատին, դրան դլխին, դարձեալ մի լուսամուտ, իսկ դէպի արեւմուտք ձգուած թեւի քանդուած լինելու պատճառով, նկատւում է միայն մի լուսամուտի կէս մասը:

Հիւսիսային պատի եւ տանիքի մնացորդները (Պատկ. 2), թէ դրսից, թէ ներսից, դարձեալ մեզ լիովին գաղափար են տալիս ամբողջի կազմութեան մասին. նա նման է եռանաւ բազիլիք չէնքի կտուրի, ճակատ կազմող պատի երկու կողմից դէպի արեւելք եւ արեւմուտք ձգուած է կողքի նեղ նաւի